

ԽԱՉԱՏՈՒՐ ԷՐՋՐՈՒՄՅԻՆ (ՍՈՒՔԵԼՅԱՆ) ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ԽԱՂԱԴՈՒԹՅԱՆ ՍԱՍԻՆ

Տ. Յ. ՍՈՒՔԵԼՅԱՆ

Խաչատուր Էրզրումցի (Առաքելյան) XVII-XVIII դարերի այն մտածողներից է, որոնք ապրելով ու ստեղծագործելով հայկական գաղթօջախներում, իրենց գիտական ու պրակտիկ գործունեությամբ նպաստել են հայկական տեսական մտքի ու մշակույթի զարգացմանը և լուսավորչական գաղափարների տարածմանը:

Խաչատուր Էրզրումցի ծնվել է 1666 թ. Էրզրում քաղաքում: Ուսում ստացել է Էջմիածնում և Հոռմի Ուրբանյան վարժարանում (պրոպագանդայի դպրոց): 1696-1707 թթ. Պոլսում զբաղվել է քարոզչությամբ, այնուհետև մեկնել է Վենետիկ և կարգվել տեղի հայկական համայնքի հոգևոր առաջնորդ՝ մնալով այդ պաշտոնում մինչև իր կյանքի վերջը՝ 1740 թվականը:

Էրզրումցու բեղմնավոր գրչին են պատկանում փիլիսոփայական, բարոյագիտական, ճարտասանական, քերականական, տրամաբանական, աստղագիտական, մաթեմատիկական, աստվածաբանական, կրոնական և այլ բնույթի բազմաթիվ աշխատություններ, որոնցում հեղինակը փորձում է հայ ընթերցողին իրազեկ դարձնել ժամանակի գիտական նվաճումներին:

Էրզրումցին իր աշխարհըմբռնմամբ անցում է կատարում ֆեոդալական գաղափարախոսությունից դեպի հումանիզմ և լուսավորչականություն՝ ըստ էության արտահայտելով առևտրական բուրժուազիայի շահերն ու ձգտումները:

Փիլիսոփայության հիմնական հարցի քննության ժամանակ ընտրելով իդեալիստական-աստվածաբանական ուղին՝ Էրզրումցին բնափիլիսոփայական և սոցիալական շատ հարցեր լուծում է ժամանակի առաջադեմ գաղափարների ոգով, ինքնատիպ ձևով: Ներկա հողվածում փորձ է արվում քննության առնել պատերազմի և խաղաղության հիմնահարցի նրա ըմբռնումները, ցույց տալու հայ փիլիսոփայական մտքի պատմության մեջ Էրզրումցու կատարած նոր հարցադրումները: Պատերազմի և խաղաղության հիմնահարցը դարեր շարունակ կարևոր տեղ է զբաղեցրել հասարակական կյանքում և գաղափարական պայքարի բնագավառում: Ժամանակակից գաղափարական պայքարի մեջ էլ այն կարևորագույն հարցերից մեկն է: Պայքարը խաղաղության համար այսօր դարձել է ամենահրատապ խնդիրը:

Պատերազմի և խաղաղության հիմնահարցը տարբեր հասարակարգերի ու ազգերի, տարբեր ըմբռնումների տեր մարդկանց կողմից ստացել է տարբեր ու հակասական մեկնաբանություններ՝ կա՛մ արդարացվում էր պատերազմը, կա՛մ դատապարտվում էր այն և պայքար մղվում խաղաղության համար: Սակայն անցյալի առաջադեմ մտածողները մըշտապես դատապարտել են պատերազմը՝ արտահայտելով առաջին հերթին հասարակ ժողովրդի ձգտումներն ու ցանկությունները:

Անտիկ մտածողները պատերազմը դիտում էին որպես ստրկական աշխատանքի հիմնական աղբյուրը, առանց որի չէր կարող գոյություն ունենալ ստրկատիրական տնտեսությունը: Այդ պատճառով էլ նրանք ձգտում էին վերացնել միայն երկպառակտչական պատերազմները: Միջնադարյան Եվրոպայում պատերազմի քննադատությունը սահմանափակվեց քրիստոնեական հավատի բարոյական որոշումներով, իսկ համընդհանուր խաղաղության գաղափարը մնաց որպես խաղաղություն Եվրոպայի քրիստոնեական ժողովուրդների միջև:

Պատերազմի ավելի խորը քննադատությամբ և խաղաղության մասին նոր խոսքով հանդես եկավ երիտասարդ բուրժուական հումանիզմը: Բուրժուազիան շահագրգռված էր վերացնելու ֆեոդալական բռնություններն ու երկպառակտչությունները, պահպանելու

խաղաղությունը ներքին ու միջազգային առևտրի զարգացման համար: Ֆեոդալական տիպի պատերազմների վերացման համար մղվող պայքարի ընթացքում իրական հիմքեր ստեղծվեցին հակապատերազմական բազմաթիվ տեսությունների մշակման համար: Էրազմ Ռոտերդամցին, Յան Կոմենսկին, Հուգո Գրոցին, Վիլյամ Պեմը, Սեն-Պյեռը, Ռուսոն, Կանտը և շատ ուրիշներ, չնայած հայացքների տարբերությանը, հանդես եկան պատերազմների դեմ՝ առաջ քաշելով խաղաղության անհրաժեշտությունը¹: Առավել տիպական է պատերազմի պատմության հարցերով զբաղվող Կլաուդիոսի ձևակերպումը. պատերազմը պարզապես քաղաքականության շարունակությունն է բուն միջոցներով:

Զնայած հիմնահարցի մեկնաբանությունները գերծ չէին թերություններից, այնուհանդերձ առաջադեմ մտածողների կողմից խաղաղության համար մղվող պայքարը և հավիտենական խաղաղության ծրագրերի մշակումը եղել ու մնում են որպես մարդկության արժեքավոր նվաճումներ: Այդ պայքարը անընդհատ գործընթաց է, որն այսօր ավելի արդիական ու հրատապ նշանակություն է ձեռք բերել համընդհանուր խաղաղությունը իրականացնելու համար:

Պատերազմի և խաղաղության հիմնահարցը իր որոշակի տեղն ունի նաև հայ տեսական մտքի պատմության մեջ: Այն հիմնականում պարզաբանվում է՝ կապված արդարացի պատերազմների ու ազգային-ազատագրական պայքարի ըմբռնման հետ: Հայ ժողովրդի վարած ազատագրական պայքարը իր տեսական հիմնավորումն ու մշակումն է գտնում շատ մտածողների երկերում:

V դարի նշանավոր գործիչներ Եզնիկ Կողբացին, Եղիշեն ու Մովսես Խորենացին հանդիսացան այդ գաղափարների առաջին շատագովները²: Ազատագրական պայքարի աշխարհիկ ու մարդասիրական գաղափարները ավելի խոր դրսևորումներ ու կիրառություն գտան պավլիկյանների ու թոմարակեցիների ուսմունքում, ինչպես նաև «Սասունցի Դավիթ» հերոսական էպոսում: Էպոսում հաստատվում է այն միտքը, որ ազատագրական պայքարի ընդհանուր վերելքի, աշխատավորների ինքնագիտակցության բուռն աճի պայմաններում ժողովուրդը կարող է ազատագրվել օտար զավթիչներից և ապահովել իր ազատությունը: Էպոսում արտահայտված է նաև այն գաղափարը, որ պատերազմի համար մեղավոր են շահասեր իշխաններն ու թագավորները, իսկ ժողովուրդները շահագրգռված չեն արյուն հեղելու: Ազգային-ազատագրական պայքարի գաղափարները հետագա զարգացում ստացան XVII-XVIII դարերում, երբ հայ ժողովուրդը քաղաքական զարթոնք ապրեց³: Պատերազմի և խաղաղության մասին հետաքրքիր գաղափարներ է զարգացնում XVII դարի մտածող Ղուկաս Վանանդեցին: Նա ատելություն է տածում պատերազմի հանդեպ և ձգտում է խաղաղության⁴:

Հայ տեսական մտքի լավագույն ավանդույթները իրենց ազդեցությունն են ունեցել Խաչատուր Էրզրումցու հակապատերազմական ըմբռնումների ձևավորման վրա⁵: Էրզրումցին, հետևելով իր նախորդների առաջ քաշած գաղափարներին և ելնելով հայ ժողովրդի իրավիճակից, պատերազմների հարցը վերլուծելիս գորավիզ է կանգնում հայ ժողովրդի և ընդհանրապես ճնշված ժողովուրդների ազատագրական պայքարին: Իսկ այդ հարցադրումները խիստ կարևոր էին նաև XVII-XVIII դարերում, երբ հայ ժողովրդի ազատագրական պայքարը նոր թափ էր առնում:

¹ Տե՛ս «Трактаты о вечном мире», М., 1963, Гуго Гроций, О праве войны и мира, М., 1956, И. С. Андреева, Проблема мира в Западно-европейской философии, М., 1975 և այլն:

² Տե՛ս Գ. Տ. Խրլոպյան, Հայ սոցիալական իմաստասիրության պատմություն, Եր., 1978, էջ 176-178, 254-255:

³ Տե՛ս Ա. Գ. Հովհաննիսյան, Դրվագներ հայ պատմագրական մտքի պատմությունից, գիրք 2, Եր., 1959, Հ. Ա. Անասյան, 17-րդ դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Եր., 1961, «Հայ ժողովրդի պատմություն», հ. 4, Եր., 1972:

⁴ Տե՛ս Հ. Ղ. Միրզոյան, 17-րդ դարի հայ փիլիսոփայական մտքի քննական վերլուծություն, Եր., 1983, էջ 190-194:

⁵ Տե՛ս Հ. Գ. Գաբրիելյան, Հայ փիլիսոփայական մտքի պատմություն, հ. 2, Եր., 1958, էջ 340-343:

Պատերազմի և խաղաղության հիմնահարցը Էրզրումցիս քննարկում է իր «Համառոտութիւն բարոյականի Աստուածաբանութեան» և «Յամառօտական իմաստասիրութիւն» աշխատությունների՝ բարոյականությանը և քաղաքականությանը նվիրված գլուխներում այն կապելով պետության արտաքին ու ներքին քաղաքականության հետ: Միշտ է, Էրզրումցիս ուղղակիորեն չի նշում, թե պատերազմը քաղաքականության շարունակությունն է՝ այլ միջոցներով, բայց նրա հարցադրումները ընթերցողին հանգեցնում են այդ եզրակացության:

Պատերազմը, ըստ Էրզրումցու, տարբեր ազգերի ու պետությունների միջև մղվող պայքար է: Էրզրումցու այս բացատրությունը ոչ միայն մոտ է պատերազմների բնույթի ճիշտ ըմբռնմանը, այլև մի քայլ առաջ էր ժամանակի այն բացատրություններից, որ իբր «...պատերազմները ոչ այլ ինչ են, քան մեծամարտություն թագավորների միջև»⁶: Խաչատուր Էրզրումցու բացատրությունը համապատասխանում էր ֆեոդալական հասարակության պատերազմների հիմնական ձևերին՝ պատերազմ՝ ֆեոդալական պետությունների միջև, երկպառակտչական ֆեոդալական պատերազմներ տիրույթների ընդլայնման համար, պատերազմ՝ կենտրոնացված ֆեոդալական պետություն ստեղծելու համար, պատերազմ՝ օտարերկրյա նվաճողների դեմ և այլն:

Ծարունակելով իր միտքը՝ Էրզրումցիս նշում է, որ պատերազմն ունի երկակի բնույթ՝ նախախնամական, պատասպարական կամ արդար և վնասարար կամ անհրաժեշտ: «Նախախնամականն այն է՝ որով նախախնամեմք, և պահպանեմք զմեզ, և զմերայինս: Վնասարար է՝ որով վնասեմք այլոց»⁷: Ընդհանրապես պատերազմների բնույթը բացահայտելիս Էրզրումցիս դրանց տալիս է բարոյական նորմերի երանգավորում՝ աշխատելով որոշել, թե պատերազմի ժամանակ կողմերը ինչքանով են մեղավոր ու անհրաժեշտ անմեղ ու արդար: Նա գտնում է, որ պատերազմող կողմերից մեկը անպայման արդար է, մյուսը՝ անարդար:

Այս գաղափարներն արդեն առաջ էին քաշվել արևմտաեվրոպական առաջադեմ մտածողների, ի մասնավորի հոլանդացի իրավագետ Հուգո Գրոցիի կողմից, որի կարծիքով. «Պատերազմը որպես պայքար չի կարող լինել արդարացի երկու կողմերի համար էլ, որովհետև բարոյական ընդունակությունը իր բնույթով չի կարող լինել ինքնահակասական»⁸:

Հայտնի է, որ յուրաքանչյուր պատերազմ որոշակի ազդեցություն է թողնում մարդկային հասարակության զարգացման վրա: Պատերազմի պատմական նշանակությունը կախված է նրա քաղաքական բովանդակությունից, որը որոշում է պատերազմի պրոգրեսիվ կամ ռեակցիոն դերը հասարակական կյանքում: Ըստ այդմ, ցանկացած պատերազմ լինում է արդարացի կամ անարդարացի:

Նախախնամական կամ արդար պատերազմի ժամանակ արդար կողմի խնդիրն է պահպանել իր ժողովրդի ու երկրի ապահովությունը թշնամու հարձակումից և նրան հետո վանել իր երկրից: Այդ գործողությունների ժամանակ արդարացի կողմը կարող է օգտագործել բոլոր միջոցները թշնամուն պարտության մատնելու համար, ասում է Էրզրումցիս: «Ի Յարդար պատերազմի է՝ օրէն առնել ընդդէմ թշնամեաց զայնոսիկ ամենեսեան, որք են հարկաւորք առ վաղճան պատերազմի: Քանզի որպէս օրինաւոր է՝ վաղճան պատերազմի, այսպէս և օրինաւորք են այնոքիկ ամենեքեան, որք են հարկաւորք առ վաղճան պատերազմի: Ուստի է՝ օրէն, ի յարդար պատերազմի սպանանել զթշնամիս, և առնուլ զբարիս անցա»⁹: Ընդունելով պատերազմների անխուսափելիությունը՝ Էրզրումցիս դրա հետ մեկտեղ համատորեն կոչ էր անում կովող կողմերին հնարավորության սահմաններում նվազեցնել պատերազմի արհաւիրքներն ու դաժանությունը: Անպայմանորեն խնայել անմեղ մարդկանց, որոնք ոչ մի կապ չունեն պատերազմական գործողությունների հետ, այսինքն՝ երեխաներին, կանանց, ծերերին և ընդհանրապես խաղաղ բնակչությանը

⁶ Вильям Пенн. Опыт о настоящем и будущем мире в Европе. В кн.: "Трактаты о вечном мире", М., 1963, с. 104.

⁷ Խ. Էրզրումցի, Համառոտութիւն բարոյականի Աստուածաբանութեան, Վէճետիկ, 1709, էջ 94:

⁸ Гуго Гроций, Աշխ., էջ 543:

⁹ Խ. Էրզրումցի, Համառոտութիւն..., էջ 98:

սպանել չի կարելի, հակառակ դեպքում արդար կողմը մեղք կգործի: Էրզրումցիս անգկացնում է պատերազմների հումանիզացիայի սկզբունքը:

Խաչատուր Էրզրումցիս անարդար, անիրավ պատերազմող թշնամու ամենը «ժողովակուտի» մեջ տեսնում է մի ուժ, որը կարող է մերկացնել իշխողների վարած քաղաքականությունը և պատժել նրանց հանուն խաղաղության: Նրա սուր քննադատությունն ուղղված է առաջին հերթին ֆեոդալական պատերազմների դեմ, որոնք մեծ մասամբ ընթանում էին հակառակ զարգացող բուրժուական դասակարգի, որի շահերը որոշակիորեն համընկնում էին աշխատավոր զանգվածների շահերի հետ:

Էրզրումցիս գտնում է, որ արդար պատերազմը պետք է ունենա իր «ընտիրք, ուղիղք և բանաորք» կանոնները, որոնք պետք է ընդունվեն ազգերի կողմից և առաջնորդվեն մարդկային հետևյալ սկզբունքներով՝

«Ջանմեղս ոչ սպանանէ. այլ զանիրաս խողխողէ:

Զթողութիւն խնդրողաց ներէ. ՚ի մահուանէ գերծուցանէ:

Արդարաբար վրեժխնդրէ. և չափաորաբար պատժէ»¹⁰:

Իշխանները և թագավորները, որոնք վարում են արդար, պատասպարական պատերազմ, պարտավոր չեն հատուցել թշնամուն հասցրած վնասները, սակայն եթե ցուցաբերեն «զթիր դիտաութիւն», անպայման մեղք կգործեն, որովհետև պետք է ունենան ազնիվ և ճիշտ նիստաություններ: Էրզրումցիս գտնում է, որ արդար պատերազմի ժամանակ իշխողները պարտավոր են պահպանել որոշակի կարգ ու կանոններ, այլապես կճանաչվեն մեղավոր ու պարտավորված կլինեն վճարելու պատերազմի պատճառած բոլոր վնասները:

Էրզրումցիս այն կարծիքին է, որ անիրավ, անարդար պատերազմող կողմը գործում է իրավունքին ու օրենքին հակառակ, առանց հիմնավոր պատճառների և վնաս է հասցնում ամենը ու արդար մարդկանց: Այդ պատճառով էլ այն «դատապարտելի, ատելի ու արհամարհելի է»: Նա կտրականապես մերժում է զավթողական պատերազմները, որոնք մարդկային զոհերի, սովի, աղքատության աղբյուր են և ժողովրդին դատապարտում են ստրկության: Նա պաշտպանում և կոչ է անում արդար ու ազատագրական պատերազմի օգտին, որը ճնշված ժողովրդին բերում է ազատություն ու անկախություն: Այս տեսակետից Էրզրումցու հարցադրումները խիստ օգտակար էին հայ ժողովրդի համար, որը այդ ժամանակ հեծում էր օտար բռնակալական լծի տակ: Այդ հարցադրման լավագույն ասացույց կարող են համարվել XVIII դարի առաջին քառորդում սկիզբ առած ազգային-ազատագրական ապստամբությունները Արևելյան Հայաստանում:

Դատապարտելով ժողովուրդների միջև մղվող պատերազմները՝ Խ. Էրզրումցիս միևնույն ժամանակ չի հանգում պացիֆիստական գաղափարների: Նա որոշակիորեն տարբերում է անարդարացի պատերազմները արդարացի պատերազմներից՝ ելնելով առաջին հերթին ժողովուրդների շահերից, հայրենիքի շահերից և պայքարի կոչ է անում ընդդեմ զավթիչների: Էրզրումցիս գտնում է, որ պետությունները պարտավոր են բոլոր միջոցները ձեռք առնել, որպեսզի անարդարացի պատերազմներ չլինեն, իսկ եթե այնուամենայնիվ դրանք բռնկվում են, ապա պետք է լինեն «օրինավոր և առանց մեղքերի»: Այսինքն՝ Էրզրումցիս կողմնակից էր պատերազմների հումանիստորեն վարմանը և պաշտպանում էր օրենքն ու օրինականությունը: Դրա համար նա առաջ է քաշում երեք պայման: Նախ, պատերազմը պետք է հայտարարվի իշխանի կամ կառավարության հրամանով: Երկրորդ, պետք է որ դրա համար լինեն ծանր ու արդար պատճառներ՝ երկրում անդորրություն պահպանելու կամ ապստամբությունը ճնշելու և հետ վերադարձնելու այն ամենը, ինչը բռնագրավվել է թշնամու կողմից: Փաստորեն Էրզրումցիս մերժում է ժողովրդի կողմից պատերազմ հայտարարելու իրավունքը և դեմ է հեղափոխական պատերազմներին: Երրորդ, պատերազմը չպետք է մղվի «թիր դիտաուտրութեան» և ատելության պատճառով:

Հանդես գալով որպես հայ առևտրական բուրժուազիայի գաղափարախոս՝ Էրզրումցիս ոչ միայն մերժում է պատերազմը վարելու ժողովրդի իրավունքները՝ այն վերապահելով իշխողներին, այլև դատապարտում է ֆեոդալական կամայականությունները,

¹⁰ Խ. Էրզրումցի, Համառօտական իմաստասիրութիւն, Քառորդ 1, Վեճետիկ, 1711, էջ 660: Ի դեպ, Էրզրումցու այս աշխատությունը գրված է չափածո:

որոնք ի չարն են գործադրվում իշխողների կողմից: Այն իշխանները, որոնք վարում են անարդար պատերազմ և անհրապարտ ասպատակում ու թալանում են անմեղների ունեցվածքը, «ոչ միայն մահացորեն մեղանշեն, այլև ՚ի ներքոյ մահացու մեղաց պարտաւորին վճարել զվնասս, զորս արարին»¹¹:

Էրզրումցի, առաջնորդվելով հումանիզմի սկզբունքներով, գտնում է, որ պատերազմող արդար կողմը պարտավոր է իր դիտավորությունները և արդարացի պահանջները ներկայացնելու նրան, ում հետ ստիպված է պատերազմելու: Եվ եթե վերջինս պարտավորվում է կատարել առաջադրված պահանջները, հատուցում է այն ամենը, ինչ արդարապես պահանջվում է նրանից, այդ դեպքում պատերազմը չպետք է սկսել: «Ուստի որք ոչ ՚ի բաց ձգեն պատերազմ, այլ տակավին սկսանին առնել պատերազմ, մեղանշեն»¹²: Իսկ եթե պատերազմը սկսվի, և թշնամին նորից պարտավորվի կատարել արդար պահանջները, պատերազմը պետք է իսկույն դադարեցնել, «քանզի զայս պահանջէ եղբայրասիրութիւն»:

Պատերազմի ժամանակ, նշում է Էրզրումցի, զինվորները ոչ թե կույր գործիք են իշխողների ձեռքում, այլ ազատ են իրենց ընտրության մեջ և կարող են հակադրվել անարդար պատերազմին:

«Երբ պատերազմ անիրաւ է. և մարտ ընդդէմ իրաւանց է:

Յայնժամ ՚ի մարտ ոչ մտանեն. ընդդէմ անմեղաց ոչ զհինեն»¹³:

Զինվորները կոչված են երկրում ապահովելու անդորրությունն ու խաղաղությունը, նրանք ստանում են ոռհիկ, թռչակ և հնազանդվում են իշխողներին: Բայց դա չի պարտավորեցնում զինվորներին, որ նրանք անարդար պատերազմին մասնակցեն և չհակադրվեն չարությանը: Էրզրումցի գտնում է, որ զինվորները նույնպես տարբեր վերաբերմունք ունեն պատերազմի հանդեպ: Այն զինվորները, որոնք արդարասեր ու բարեսեր են, ոչ կեղեքում, ոչ կողոպտում և ոչ էլ անհրապարտ են վերաբերվում թշնամու հետ: Բայց կան զինվորներ, որոնք անհրապարտ են վերաբերվում թշնամու հետ: Դրանք ոչ թե զինվորներ են, այլ կողոպտիչներ, ավազակներ և մարդասպաններ, ասում է Էրզրումցի: Նա համոզված է, որ պատերազմող կողմերին առաջադրվող բարոյական, մարդասիրական ու արդարացի պահանջները պարտադիր պետք է լինեն նաև զինվորների համար:

Եթե տարբեր երկրների միջև չհարձակվելու դաշինք կա, ապա այն պետք է պահպանել: Խախտողը մեղանշում է արդարության դեմ: Բայց պատահում է նաև անարդար դաշնադրություն, երբ մեկը բռնությամբ իր կամքը պարտադրում է մյուսին: Այդ դեպքում, ասում է Էրզրումցի, դաշինք խախտելը և օրինական պահանջներ առաջադրելը ոչ միայն մեղք չէ, այլև արդարացի է: «Բայց ուխտք, և դաշինք որք բռնութեամբ, և անհրաւաբար լինին, և որք յոյժ վնասեն հասարակութեան, և կրօնի, ոչ պարտաւնդեն զմեզ, զի պահիցիմք զնոսս: Բանզի սոյնպիսիքն չեն օրինատրք: Ուստի որք ոչ պահեն ուխտս և դաշինս, ոչ մեղանշեն»¹⁴:

Էրզրումցու այս մտքերը նույնպես համահունչ են հայ ազատագրական շարժումներին: Ինքնին հասկանալի է, որ XVIII դարի սկզբին հայ ժողովուրդը, գտնվելով օտար նվաճողների լծի տակ, չէր կարող մղել անարդարացի պատերազմ, այլ ջանում էր ազատվել իրեն պարտադրված «դաշինքից», հետևաբար նրա համար օտարների «անարդար դաշնադրությունը» խախտելը և ազատություն ձեռք բերելը ուներ կենսական նշանակություն, որի անհրաժեշտությունը զգում էր հատկապես նոր ձևավորվող հայ առևտրական բուրժուազիան:

XVII-XVIII դարերում մշակվում են հավիտենական խաղաղության գաղափարներ: Խաղաղությունը կամ դաշինքը պատկերացվում էր որպես իշխողների բարի կամքի արտահայտություն, այդ պատճառով էլ մտածողների ջանքերը ուղղված էին այն բանին, որ խաղաղության ապահովումը իրականացնեն առաջին հերթին իշխողները՝ հրաժարվելով

¹¹ Խ. Էրզրումցի, Համառոտութիւն..., էջ 95:

¹² Նույն տեղում, էջ 96:

¹³ Խ. Էրզրումցի, Համառոտական իմաստասիրութիւն, հ.1, էջ 530:

¹⁴ Նույն տեղում, էջ 98:

պատերազմ վարելու մտքից: Ազգային պետությունների ստեղծումը, ներազգային խաղաղասիրական ավանդույթների առաջացումը, կապիտալիստական առևտրի խաղաղասիրական առաքելության պատկերացումը ուժեղացնում են խաղաղության հայեցակարգերի ճշանակությունը:

Բացահայտելով պատերազմների բնույթը և մարդկությանը դրանց հասցրած վնասները՝ Էրզրումցին, հավատարիմ մնալով դարի ոգուն, խաղաղության կոչ է անում, հակադրվում է պատերազմին: Խաղաղությունը ապահովում է հասարակության անդորրությունը, որին ձգտում են բոլոր աշխատավորները:

«Խաղաղութիւն է տենչալի. ամենևին փափագելի:

Ջի ուրանօր խաղաղութիւն. անդ վնասուց դադարութիւն:

Անիրավութեանց խափանութիւն. հակառակութեանց լուծութիւն:

Անտանօր բարեկամութիւն. ՚ի միասին սիրելութիւն»¹⁵:

Էրզրումցին խաղաղությունը դիտարկում է երկու տեսանկյունից՝ ներքին և արտաքին: Նա այն կարծիքին է, որ ներքին խաղաղությունը ապահովում է հասարակության անդամների և տարբեր դասակարգերի միջև միաբանությունը և հակադիր է ներքին խռովություններին ու ապստամբություններին:

«Այս խաղաղութիւն տենչալի. որ միաբանութիւն կոչի:

Ջի երջանիկ այն պետութիւն. արքայութիւն, կայսերութիւն:

Որոյ անդամք միաբանք են. ամենեքեան համաձայնք են:

... Քանզի միութիւն պահպանէ. միաբանութիւն պահէ:

Երկպառակտութիւնք փետեկտեն. անմիաբանութիւնք քակտեն:

Եւ զամուր պետութիւն եղծեն. զթագաւորութիւն քակեն:

Այս խաղաղութիւն հոգալի. հոգացողաբար պահելի»¹⁶:

Խաչատուր Էրզրումցին, քարոզելով դասակարգային համերաշխություն ու միաբանություն, մերժում է անմիաբանությունն ու ապստամբությունը, որոնք կարող են քայքայել պետությունը, հասարակական կարգը, մինչդեռ պետությունը կամ իշխանությունը պետք է լինի կայուն ու հաստատուն:

Արտաքին խաղաղությունը արդեն վերաբերում է տարբեր պետությունների արտաքին հարաբերություններին: Էրզրումցին պաշտպանում է արտաքին խաղաղությունը՝ գտնելով, որ դա նպաստում է բոլոր ժողովուրդների համագործակցությանը, միաբանությանը, հաստատուն է պահում պետությունը և հնարավոր է դարձնում պատերազմների կանխումը:

Այսպիսով, հանդես գալով բուրժուական հարաբերությունների կազմավորման դարաշրջանում, Խաչատուր Էրզրումցին պատերազմների բնույթը քննում է հիմնականում ճիշտ և հարցը լուծում է հումանիզմի ու արդարության դիրքերից:

Փ. Ս. АРАКЕЛЯН - *Хачатур Эрзрумци (Аракелян) о войне и мире.* - В статье дан анализ понимания Х. Эрзрумци проблемы войны и мира, выявлено то новое, что внесено им в постановку этого вопроса в истории армянской философской мысли. Показано, что Х. Эрзрумци обсуждает эти вопросы с позиций гуманизма и справедливости.

¹⁵ Խ. Էրզրումցի, Համառոտական իմաստասիրութիւն, հ. 1, էջ 662:

¹⁶ Նույն տեղում: